Իրավաբանական անձի պետական գրանցման

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա1012535

Իրավաբանական անձի անվանումը
«ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գրանցված է Պետական ռեգիստրի
կենտրոնական մարմնի կողմից

Գրանցման համարը **211.171.862535**
Գրանցման ամսաթիվը **2015-06-24**
Իրավաբանական անձի ծածկագիր(կոդը) **49499579**
Հարկ վճարողի հաշվառման համար **05542743**
Իրավաբանական անձի տեսակը **ոչ առևտրային**
Գործունեության ժամկետը **անժամկետ**

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"24" 06 2015 թ.

Վկայականն ուժի մեջ է միայն ներդիրի հետ միասին

L.S.

ՆԵՐԴԻՐ 001

Իրավաբանական անձի պետական գրանցման
N 03Ա1012535 վկայականի

Իրավաբանական անձի անվանումը **«ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Գտնվելու վայրը **ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ, 7 փ. / շ / 8 / բն. 15 ք. ԳՅՈՒՄՐԻ 3126 ՀԱՅԱՍՏԱՆ**

Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար,
Նախագահ՝ ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎՐԱՄԻ
անձնագիր **001946086**, տրվ. **2015-04-10, 016** կողմից,
հասցե **ԱՆԻ ԹՂՄ. 7 փ. / շ / 8 / բն. 15 ԳՅՈՒՄՐԻ 3126 ՇԻՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ**

Իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը ———

Այլ տեղեկություններ ———

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

"24" 06 2015 թ.

Ներդիրն ուժի մեջ է միայն վկայականի հետ միասին

L.S.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2018-02-13

«ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ Հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Գրանցման համար	211.171.862535
Հիմնադրման տարի	2015
Գրանցման ամսաթիվ	2015-06-24
Գործունեության ժամկետ	**Անժամկետ**
Կարգավիճակ	**Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	49499579
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	05542743
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	172535
Էլ. փոստ	identityandworldview@gmail.com
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ, 7 Փ. / Շ / 8 / ԲՆ. 15 Ք. ԳՅՈՒՄՐԻ 3126 ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	(55)235323

Գործադիր մարմնի ղեկավար

Պաշտոն	**Նախագահ**
Անուն Ազգանուն	ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎՌԱՄԻ
Անձնագրային տվյալներ	001946086 2015-04-10 016
Հասցե	ԱՆԻ ԹՂՄ. 7 Փ. / Շ / 8 / ԲՆ. 15 ԳՅՈՒՄՐԻ 3126 ՇԻՐԱԿ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՆ ՀԱՄԵԼԱԾՈՒ ԹՎ 2018-02-13
ՓԻՆԱԿՈԹԵՔԱՅԻՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՑԻՏԵՍՔԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ
Հանրային կոմանեերտության (ՀԿ)

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2018-02-13	**Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)**

Քաղվածքը տրամադրող՝ _____ **Լուսինե Պողոսյան**
ստորագրություն

Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ **13-02-2018**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԱՌԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
05
ԴՈՒՐԴՈՒՄՈՎԿ * ԴԻՍԵՑ-ԱՐՈՒՄԱՆՅԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ * ՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԱՌԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

Կազմված է «24» 01.2018թ. և բաղկացած է 13 թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

Օրինակ 1

Հաստատված է
«Ինքնություն և աշխարհայացք»
երիտասարդական հասարակական
կազմակերպության արտահերթ թիվ 1
Ժողովի՝ 24.01.2018 թվականի որոշմամբ:

Կազմակերպության
նախագահ՝ _____
Մ. Հովհաննիսյան

Գրանցված է
ՀՀ Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
24 հունիսի **2015թ.**
Գրանցման թիվ՝ 211.171.862535
Վկայական թիվ՝ 03Ա 1012535
Հարկ վճարողի հաշվառման համար՝
05542743
24.06.2015 թվականին գրանցված
կանոնադրության թիվ 001.2 փոփոխությունը
գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության կողմից
«13» հունվարի 2018թ.
ՀՀ իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալություն

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(Նոր խմբագրություն)

Գյումրի 2018թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ինքնություն և աշխարհայացք» երիտասարդական հասարակական կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2. Կազմակերպությունը գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, խտրականության բացառումը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը, բարեխղճությունը, հաշվետվողականությունը:

1. 4. Կազմակերպությունն ունի հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով կլոր կնիք, կարող է ունենալ դրոշմ, հաշվարկային հաշիվներ բանկերում՝ ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով:

1. 5. Պետական գրանցման պահից Կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

1.6. Կազմակերպությունն ունի իր խորհրդանիշը՝ որում պատկերված է կապույտ անգլերեն I և W տառերը: I տառի վերևում մոլորակի պատկերն է, որից աջ գրված է IDENTITY & WORLDVIEW:

Խորհրդանիշի պատկերը կցված է սույն կանոնադրությանը:

1.7. Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ «Ինքնություն և աշխարհայացք» երիտասարդական հասարակական կազմակերպություն, կրճատ՝ «Ինքնություն և աշխարհայացք» երիտասարդական ՀԿ, հապավումը՝ ԻԱ ԵՀԿ,

Անգլերեն լրիվ՝ “Identity and worldview” youth non-governmental organization, կրճատ՝ “Identity and worldview” youth NGO, հապավումը՝ IW YNGO:

Ռուսերեն լրիվ՝ “Идентичность и мировоззрение ” молодежная общественная организация, կրճատ՝ “Идентичность и мировоззрение ” молодежная ОО, հապավումը՝ ИМ МОО:

1.8. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Անի թաղամաս, 7-րդ փողոց, 8-րդ շենք, բնակարան 15 :

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Կազմակերպությունը իր առջև նպատակ է դնում դեռահասների և երիտասարդների հետ աշխատանքի միջոցով նպաստել Գյումրիի մշակութային, կրթական և սոցիալական զարգացմանը:

2.2 Կազմակերպության նպատակներն են օրենքով սահմանված կարգով՝

- դեռահասների և երիտասարդների կողմից Ինքնության ճանաչում և զարգացում: Ակտիվացում հասարակության կյանքում, իրազեկում ինքնաղրսևորման եղանակների մասին, գեղագիտական զարգացում, հմտությունների ուսուցում, մոտիվացիայի բարձրացում, կանանց և աղջիկների դերի բարձրացում հասարակության մեջ,
- դեռահասների և երիտասարդների կողմից աշխարհայացքի ձևավորում և զարգացում: Այլ մշակույթների մասին տեղեկացվածության բարձրացում, մշակութային բազմազանություն,
- միջմշակութային երկխոսություն: Խաղաղության կրթություն, կոնֆլիկտների խաղաղ հարթեցում, հաղորդակցման էթիկայի բարձրացում:

2.3 Կազմակերպության խնդիրներն են օրենքով սահմանված կարգով՝

- կազմակերպել դասընթացներ և պարապմունքներ ազգային մշակույթի, համաշխարհային մշակույթի մասին,
- լեզուների ուսուցում,
- դեռահասների և երիտասարդների հետ մշակութային միջոցառումներ ժամանակակից արվեստի, կինոարվեստի, արվեստի այլ ոլորտներում,
- կլոր սեղաններ, քննարկումներ մշակութային հարստացման, զարգացման շուրջ,
- կլոր սեղաններ, քննարկումներ, դասընթացներ կանանց և աղջիկների՝ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման մասին,
- դասընթացներ և գործնական պարապմունքներ դեռահասների և երիտասարդների հետ ոչ ֆորմալ կրթության մեթոդներով,
- դասընթացներ և գործնական պարապմունքներ մշակութային կոնֆլիկտների լուծման և տրանսֆորմացիայի մեթոդների մասին,
- ճանաչողական այցելություններ, փորձի փոխանակում հարևան և այլ երկրների հետ,
- ՀՀ օրենսդրությամբ չարգելվող այլ գործունեություն

2.4. Իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, ՀՀ-ում գրանցված այլ կազմակերպությունների հետ:

2.5. Հասարակական կազմակերպությունը չի կարող ունենալ այնպիսի նպատակներ, որոնք օրենքով վերապահված են կուսակցությանը, կրոնական

կազմակերպությանը, արհեստակցական միությանը կամ այլ հասարակական միավորմանը:

3.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Իր խնդիրների իրականացման համար միջոցներ հայթայթելու նպատակով կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով, կարող է կազմակերպել տարբեր բնույթի և ծավալի միջոցառումներ, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ՝ արտերկրում:

3.2.Կազմակերպությունը կարող է օրենքով սահմանված կարգով ստեղծել տնտեսական ընկերություններ և նրանց միջոցով իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, որից ստացված եկամուտները կուղղվեն կազմակերպության նպատակներին:

3.3.Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անձամբ կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան:

3.4. Իր նպատակների և խնդիրների իրականացման համար կազմակերպությունը կարող է իրականացնել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

3. 5. Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ունենալ լրատվական միջոցներ և ունենալ տպագիր մարմիններ:

3. 6. Կազմակերպությունը պատասխանատու չէ իր անդամների անհատական գործունեության համար:

4.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1. Կազմակերպության անդամ կարող են դառնալ Կազմակերպության նպատակներին ու գործունեությանը համակրող, Կազմակերպության գործունեությանն աջակցելու պատրաստակամություն ունեցող, Կազմակերպության կանոնադրության դրույթները ընդունող 18 տարին լրացած յուրաքանչյուր ոք:

4. 2. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին:

4.3. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Կազմակերպության գործադիր մարմինը:

4.4. Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից:

4.5. Կազմակերպության անդամությունից հեռացումը տեղի է ունենում գործադիր մարմնի որոշմամբ:

Կազմակերպության անդամին Կազմակերպության անդամությունից հեռացնելու մասին որոշման հիմք կարող են հանդիսանալ.

ա) Կազմակերպության անդամի կողմից իր պարտականությունները չկատարելը.

բ) Կազմակերպության անդամի կողմից Կազմակերպության կանոնադրությանն ու նպատակներին հակասող գործողություններ կատարելը:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1.Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

- Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրել և ընտրվել Կազմակերպության ղեկավար մարմիններում.
- ներկա գտնվել Ժողովին անձամբ.
- անվճար կարգով օգտվել Կազմակերպության ծառայություններից.
- ծանոթանալ Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները.
- վերադասության կամ դատական կարգով բողոքարկել Կազմակերպության մարմինների որոշումները:
- Կազմակերպությունից պահանջել տեղեկություններ, ստանալ փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին.
- իրականացնել օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

5.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

- կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները.
- մուծել անդամավճար՝ Ժողովի կողմից սահմանված լինելու դեպքում, որոնց չափն ու վճարման կարգը սահմանում է Ժողովը.

- բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները:

5.3.Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության Նախագահի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողություն, Կազմակերպության անդամությունից հեռացում:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը, իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

1) իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող.

2) բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով.

3) ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից.

4) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ.

5) տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին.

6) կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ.

7) օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

8) համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.

9) կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:

6.2. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) վարել իր անդամների և կամավորների հաշվառումը.

2) եթե Կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է հինգ միլիոն և ավելի Հայաստանի

Հանրապետության դրամի չափով, ապա օրենքով սահմանված կարգով պետական մարմիններ ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները ոչ ուշ, քան հաջորդող տարվա մայիսի 15-ը հանրային միջոցներից ֆինանսավորման մասով ենթակա են պարտադիր աուդիտի՝ Կազմակերպության ժողովի ընտրած անկախ աուդիտորի կողմից:

3) պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը.

4) «Հասարակական Կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր.

5) Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը.

6) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն.

7) իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը.

8) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

6. 3. Կազմակերպության մարմինները նրա անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Կազմակերպության:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Կազմակերպության կառավարման մարմիններն են՝ ժողովը և գործադիր մարմինը /նախագահը/:

7.1. Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ ժողովին:

7.2. Կազմակերպության հերթական ժողովը հրավիրվում է 5 տարին մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է գործադիր մարմինը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ եթե դա հնարավոր չէ, ապա հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ կազմելով համապատասխան արձանագրություն: Գործադիր մարմինը /նախագահը/ որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ քան 20 օրվանից առաջ պատվիրված նամակով, կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է կազմակերպության անդամներին և կառույցներին:

7.3. Կազմակերպության արտահերթ Ժողով հրավիրվում է գործադիր մարմնի նախաձեռնությամբ, կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ գործադիր մարմնի կողմից.

7.4. Կազմակերպության արտահերթ Ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ Ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Ժողով անցկացնելու օրվանից 5 օր առաջ:

7.5. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

- Կազմակերպության կանոնադրության հաստատումը, փոփոխումը լրացում կատարելը և նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը.
- Կազմակերպության գործադիր մարմնի ընտրությունը, փոփոխումը, ետ կանչումը և լիազորությունների դադարեցումը.
- Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) և վերակազմակերպման մասին որոշմների ընդունումը.
- ստեղծել այլ իրավաբանական անձ, կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը.
- Կազմակերպության կառուցվածքի հաստատումը.
- Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը.

7.6. Ժողովի իրավասության հարցերի մեջ են մտնում նաև՝

- Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը.
- Կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն սահմանված լինելու դեպքում վարձատրության կարգի և պայմանների սահմանումը.
- Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն կազմակերպությունը ենթակա է աուդիտի.

- որոշում է անդամավճարների չափերը և դրանց գանձման կարգը, սահմանում է Կազմակերպության անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները, ինչպես նաև Կազմակերպության անդամների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը:
- հինգ տարին մեկ հաստատելու գործադիր մարմնի կողմից ժողովի զումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները.
- օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

7.7.Կազմակերպության գործունեությունը վերահսկելու համար սույն կանոնադրությամբ առանձին մարմին չի նախատեսվում ստեղծել:

7.8. Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր անդամների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են կազմակերպության բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները պահպանվում են 5 տարի:

7.9. Գործադիր մարմինը ընտրվում է Ժողովի կողմից հինգ տարի ժամանակով: Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության նախագահն է: Նախագահը ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և վարում էժողովի նիստերը:

7.10. Գործադիր մարմնի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

7.11. Գործադիր մարմինը Կազմակերպության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխան՝

- ապահովում է Ժողովի որոշումների կատարումը.
- մինչև հինգ միլիոն դրամ արժողությամբ ցանկացած գույք միանձնյա, իսկ հինգ միլիոնից ավելի արժողությամբ ցանկացած գույք ժողովի հետ համաձայնեցնելով տնօրինում և կառավարում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից.
- ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
- տալիս է լիազորագրեր.
- բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

- իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
- հաստատում է կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը.
- հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,
- ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում /հեռացնում/ Կազմակերպության անդամությունից,
- հաստատում է Կազմակերպության մարմինների հաշվետվությունները, ինչպես նաև Ժողովի գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք 5 տարին մեկ անգամ ներկայացնում է ժողովի հաստատմանը.
- իրականացնում է օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

7.12. Գործադիր մարմինն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

7. 13. Գործադիր մարմինը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

8.1. Կազմակերպությունը կարող է իր նպատակներին համապատասխան՝ ունենալ շահառուներ, ինչպես նաև ներգրավել կամավորների իր աշխատանքներում, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության:

8.2. Կազմակերպության շահառուներն են՝ Կազմակերպության անդամները, Գյումրիի և Հայաստանի այլ մարզերի գյուղական և քաղաքային համայնքների երիտասարդները և դեռահասները, կրթական, մշակութային հաստատությունների ներկայացուցիչները, համայնքները, ի շահ որոնց իրականացվում է Կազմակերպության գործունեությունը:

Կազմակերպության կողմից կամավորներ ներգրավելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Բարեգործության

մասին» ՀՀ օրենքը և ՀՀ աշխատանքային օրենսգիրքը այնքանով, որքանով այդ կարգավորումները չեն հակասում Օրենքին:

8.3. Եթե կամավորի աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր, որը համաձայնություն է կամավորի և Կազմակերպության միջև: Պայմանագրի հիման վրա կամավորն իր կամքով, առանց վարձատրության և որոշակի ժամկետով իրականացնում է կամավոր աշխատանք, իսկ Կազմակերպությունն ապահովում է կամավոր աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ:

8.4. Արգելվում է կամավորներին ներգրավել Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության մեջ:

8.5. Կամավոր աշխատանքի հետ կապված վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9. 1. Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:

9. 2. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

9. 3. Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝

- անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները,
- բանկերից կամ վարկային կազմակերպություններից ստացված վարկերը,
- դրամաշնորհները,
- բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները,
- Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները,
- Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:

9. 4. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար և չեն կարող բաշխվել անդամների միջև:

10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

10. 1. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի կամ դատարանի որոշմամբ:

10. 2. Ժողովը կազմավորում է լուծարման հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարման հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, Ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ, եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

10. 3. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Հավելված 1

«Ինքնություն և աշխարհայացք» երիտասարդական հասարակական կազմակերպություն խորհրդանիշի պատկերը

Սույն կանոնադրությունը կազմված է 24.01.2018թ. և բաղկացած է 13 թերթից:

Հավելվածներ՝ 13 (տասներեք) թերթ։

05

ՁԵՎ 1

ՀԱՅՏԱՁԵՎ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի պատվերով իրականացվող մշակութային միջոցառումների անցկացման մրցույթի

1. Ընդհանուր տեղեկություններ

Ծրագրային անվանակարգ	**Առաջարկվող նախագծի / Միջոցառման անվանումը** «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 8-րդ պլեներ
Ծրագրի ընդհանուր բյուջե 1.600.000(մեկ մլն. վեց հարյուր հազար) ՀՀ դրամ	**ՀՀ Շիրակի մարզպետարանից հայցվող գումար** 1.600.000 (մեկ մլն. վեց հարյուր հազար) ՀՀ դրամ
Ծրագրի սկիզբ/ավարտ	15.08.2019 – 01.10.2019
Կազմակերպության պաշտոնական անվանում	«Ինքնություն և աշխարհայացք» Երիտասարդկան հասարակական կազմակերպություն
Կազմակերպության իրավական կարգավիճակ	Հասարակական կազմակերպություն
Կազմակերպության ՀՎՀՀ	05542743
Կազմակերպության իրավաբանական հասցե	Անի թաղամաս, 7փ., շ. 8, բն. 15, Գյումրի 3126, Շիրակ, Հայաստան
Կազմակերպության գործունեության հասցե	Անի թաղամաս, 7փ., շ. 8, բն. 15, Գյումրի 3126, Շիրակ, Հայաստան
Կազմակերպության բանկային տվյալները	(բանկի անվանում) Ինեկոբանկ ՓԲԸ 2050122058651001
Կազմակերպության ղեկավարի անուն, ազգանուն	Մարինե Հովհաննիսյան
Նախագծի/ծրագրի/միջոցառման ղեկավարի անուն, ազգանուն	Մարինե Հովհաննիսյան
Նախագծի/ծրագրի/միջոցառման ղեկավարի հեռախոսահամար/ էլ. փոստ	mara.hovh@gmail.com +37455235323, +37498235328

2. Կազմակերպության առաքելության և գործունեության նկարագրությունը. Կազմակերպության հաջողության պատմությունները, խնդիրները, գործունեության փորձառությունը (առավելագույնը 300 բառ):

Կից ներկայացնել թիմի անդամների հակիրճ ինքնակենսագրականները, կազմակերպության գործունեության գնահատման ցանկացած փաստաթուղթ (դիպլոմ, պատվոգիր, մրցանակ, հավաստագիր և այլն):

«Ինքնություն և աշխարհայացք» Երիտասարդական Հասարակական Կազմակերպությունը հիմնվել է 2015թ մի խումբ փորձառու երիտասարդների կողմից, որոնց միավորել է հայ

երիտասարդների համար մշակութային և կրթական հնարավորություններ ստեղծելու ցանկությունը:
Հիմնադրման պահից կազմակերպությունն իր առջև նպատակ է դրել երիտասարդների և դեռահասների հետ աշխատանքի շնորհիվ հասնել Գյումրու և առհասարակ Հայաստանի կրթական, մշակութային և սոցիալական զարգացմանը: Մենք նպաստում ենք երիտասարդների կողմից ինքնադրսևորության, մշակութային լայն աշխարհայացք ունենալու կարևորության ընկալմանը, նպաստում ենք վերջիններիս գեղագիտական և աշխատանքային հմտությունների զարգացմանը:
Մեր կազմակերպության կարգախոսն է՝ օգնել երիտասարդներին ճանաչել իրենց ազգային ինքնությունը, բայց միևնույն ժամանակ ունենալ լայն աշխարհայացք և հակառակը՝ ինչքան էլ ճանաչել աշխարհը, միևնույն է՝ չմոռանալ ազգային ինքնությունը:

Գործունեության ընթացքում կազմակերպությունը իրականացրել է մի շարք ծրագրեր և նախաձեռնություններ, որոնց նպատակն է եղել.

- Հայաստանի և մասնավորապես Շիրակի երիտասարդության համար ստեղծել եվրոպական կրթական ծրագրերի ֆորմատով անցկացվող դասընթացներ՝ արծարծելով կարևոր սոցիալական խնդիրներ:
-Երիտասարդների արտիստիկ և աշխատանքային հմտությունների զարգացում
-Նպաստել սոցիալապես անապահով երիտասարդների կրթական գործին
-Երիտասարդների շրջանում խաղաղ համակեցության սկզբունքների ուսուցում՝ նպատակ ունենալով նպաստել հասարակության մեջ տարածել հարգանքի, բազմակարծության սկզբունքները
Կազմակերպության անդամները բազմիցս անցել են երիտասարդների հետ աշխատանքներ իրականացնելու միջազգային վերապատրաստումներ, մասնակցել են միջազգային փոխանակման բազում ծրագրերի, եղել են վերջիններիս կազմակերպիչներ:

3. Միջոցառման անցկացման համար առաջարկվող հայեցակարգը և նկարագրությունը (նվազագույնը 100, առավելագույնը 300 բառ)

2019թ. անցկացվելու է «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 8-րդ պլեները: Մշակութային ամենամյա միջոցառումը ունի իր ձևավորած գեղեցիկ ավանդույթները: Արդեն ավանդույթ դարձած ձևաչափը պահելու և նորամուծություններ կատարելու ցանկությամբ «Ինքնություն և աշխարհայացք» ԵՀԿ-ն պատասխանատվությամբ ցանկանում է իրականացնել պլեների համակարգման աշխատանքները:
18-30 տարեկան 45 նկարիչներ Հայաստանից, ԼՂՀ-ից, Ջավախքից և սփյուռքից կմասնակցեն պլեներին: Պլեները կմիավորի տարբեր արվեստագետների, որոնք միասին աշխատելով կխթանեն միջմշակութային երկկխոսությունը, կստեղծեն միջմշակութային երկխոսության հարթակ: Մասնակիցները կունենան հարուստ մշակութային և ստեղծագործական միջավայր, կմասնակցեն վարպետության դասերի, դասախոսությունների, կայցելեն թանգարաններ: Միասին ապրելով և ստեղծագործելով՝ կխթանենք նաև մասնակիցների օրակարգից դուրս ճանաչողությունը:
Մենք պատրաստվում ենք տալ մասնակիցներին հնարավորություն հանդես գալու իրենց նախաձեռնություններով, մտահղացումներով: Նրանք ազատ կլինեն ներկայանալու իրենց գեղարվեստական ոճերով, ստեղծագործական գաղափարներով, կազմելու օրակարգից դուրս իրենց ճանաչողական ժամանցը:

Պլեների վերջին օրը՝ ըստ ձևավորված ավանդույթի, կկայանա պլեների ցուցահանդեսը՝ պատվիրակությունների, հյուրերի ներկայությամբ, կլինեն ելույթներ և կշնորհվեն պատվոգրեր, կինչի պլեների հիմնը:

4. Միջոցառման անցկացման համար առաջարկվող հիմնավորումը, նորարարությունը և/կամ կարևորությունը, արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ գործիքակազմը եւ տեխնիկաները (առավելագույնը 300 բառ):

-«Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային պլեները անցկացվում է՝ ՀՀ մշակութային քաղաքականության ուղղությունների և ռազմավարական գերակայությունների հետ համահունչ:
Այն խթանում է երիտասարդ արվեստագետների ստեղծագործական հմտությունները, փորձ հաղորդում երիտասարդներին, հանրահռչակում ՀՀ մշակութային արժեքները երիտասարդության շրջանում, մշակութային երկխոսության և ճանաչողության հիմքեր ստեղծում ՀՀ տարբեր մարզերի, ԼՂՀ, Ջավախքի և սփյուռքի հայության համար:

-Մինաս Ավետիսյանի պատկերելով Շիրակի կյանքի հանգիստ ընթացքը՝ ստատիկ և խաղաղ կերպարներում, բայց նաև այդ միապաղաղության մեջ խտացած էներգիան՝ արտահայտելով այն իր ինտենսիվ գույներում, որսացել և պատկերել է Շիրակի ոգին: Մենք առաջարկելու ենք մասնակիցներին որսալ այս ոգին, զգալու Շիրակի այս լուռ ըմբոստության ոգին՝պլեների առաջին օրը մեր թիմի արվեստաբան համակարգողի կողմից վարած ոչ ֆորմալ կրթական հատվածում և առաջարկելու ենք ստեղծել ավանդույթ դարձած համատեղ կտավը նշված ոգով: Մասնակիցներին առաջարկվելու է ցանկության դեպքում ստեղծագործել նաև լենդարթի և պոստմոդերնիզմի արտահայտչամիջոցներով՝ ի հավելումն պլեների նկարների: Այս ամենը կցուցադրվի պլեների ցուցահանդեսի ժամանակ:

-Կազմակերպությունը համակարգման աշխատանքներ է տարել: Պլեների անցկացման վայր՝«Աղաջանյան» ճամբարի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն, որ ճամբարի ազատ լինելու օրվանից սկսած՝ 28-31 տարածքը կտրամադրվի Պլեների անցկացմանը: «Աղաջանյան» ճամբարը մարզում միակ տարածքն է, որը ունի Պլեների համար հարմար բոլոր պայմանները՝ կեցության և բնության մեջ լինելու և ստեղծագործական ոգի ապահովելու տեսակետից:
Բացի այդ,կապ ենք հաստատել ԼՂՀ Մշակույթի նախարարության հետ՝ մասնակիցներ ապահովելու հարցով: Կապ ենք հաստատել նաև Ջավախքի մշակութային հաստատությունների հետ:

5. Միջոցառման անցկացման համար առաջարկվող ձևերը (առավելագույնը 300 բառ):

-Բացօթյա նկարելու ժամեր, որտեղ մասնակիցները կկարողանան զարգացնել իրենց նկարչական հմտությունները
-Վարպետության դասեր պրոֆեսիոնալ արվեստագետների կողմից
-Դասախոսություններ Մինաս Ավետիսյանի մասին արվեստաբանների կողմից
-Ճամբար կայցելեն Մինաս Ավետիսյանի հարազատներից, ինչը կոգեշնչի երիտասարդ նկարիչներին
-Միջմշակութային երեկո, որի ժամանակ կծանոթանան այլ մարզերի, ինչպես նաև ԼՂՀ, Ջավախքի հետաքրքիր ավանդույթների: Սա կխթանի երիտասարդության ջրջանում մշակութային իրազեկվածությունը և միջմշակութային երկխոսությունը

- Երիտասարդները ազատ կլինեն երեկոյան տնօրինելու իրենց ազատ ժամանակը և նոր ընկերներ ձեռքբերել
-Մասնակիցները կունենան գեղանկարչական ցուցադրության մասնակցելու փորձ
-Այցելություններ Մինաս Ավետիսյանի, ինչպես նաև Գյումրու տարբեր թանգարաններ: Սա մեծ հնարավորություն է հատկապես այլ մարզերի, ԼՂՀ, Ջավախքի և սփուռքի երիտասարդների համար

6. Միջոցառման անցկացման համար առաջարկվող թիրախային խմբերը և մասնակիցները:

-Երիտասարդ նկարիչներ Հայաստանի բոլոր մարզերից և Երևանից, ԼՂՀ-ից, Ջավախքից և սփյուռքից
Երիտասարդները հնարավորություն կունենան համատեղ բացօթյա ստեղծագործելու, զարգացնելու իրենց հմտությունները, փորձված նկարիչներ և բանիմաց արվեստաբաններ իրենց գիտելիքները կփոխանցեն երիտասարդներին: Երիտասարդ արվեստագետները կունենան ցուցադրության մասնակցության փորձառություն, մասնակցության հավաստագրեր:
Երիտասարդները կունենան միջմշակութային փոխանակման հնարավորություն: Կծանոթանան և ընկերներ ձեռք կբերեն ՀՀ այլ մարզերից, Ջավախքից, ԼՂՀ-ից, սփյուռքից, կսովորեն տարբեր ավանդույթներ և կընդարձակեն մտահորիզոնը

-Ցուցադրության օրը ներկա հյուրերը կծանոթանան հայտաղանդաշատ երիտասարդների, կբացահայտեն նոր տաղանդների, Մինաս Ավետիսյանի արվեստով ոգեշնչմամբ անցկացված ցուցադրությանը էսթետիկ մթնոլորտին:

-Իրենց համայնքներ վերադարձած երիտասարդները կտարածեն «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային պլեների գաղափարները՝ իրենց համայնքներում կիսվելով տպավորություններով, հանրահռչակելով Մինաս Ավետիսյանի արվեստը

-Միջոցառման հետևորդները սոցիալական ցանցերում հնարավորություն կունենան ծանոթանալ պլեների առօրյային, տեսնելու տաղանդաշատ նկարիչների աշխատանքներին, կկրթվեն և բարձրացնեն տեղեկատվածությունը Մինաս Ավետիսյանի մասին

7. Միջոցառման իրականացումից ակնկալվող արդյունքները:

-Ծրագրի արդյունքում 45 երիտասարդ արվեստագետներ ՀՀ բոլոր մարզերից, սփյուռքից, ԼՂՀ-ից, Ջավախքից կկրթվեն, փորձառություն ձեռք կբերեն և կհմտանան իրենց արվեստում՝ ոգեշնչված Մինաս Ավետիսյանի արվեստով և Շիրակի բնությամբ: Նրանք ավելի լավ կծանոթանան Մինաս Ավետիսյանի արվեստին, կընկալեն վերջինիս աշխարհընկալումը, ձևակերտման և գունային մեթոդներն և փիլիսոփայությունը: Երիտասարդների նկարչական տեխնիկական հմտությունները ավելի զարգացած կլինեն՝ վարպետության դասերի ընթացքում ստացած գիտելիքների և գործնական խորհուրդների շնորհիվ:

-Պլեների ցուցահանդեսը – ներկա հյուրերը և սոցիալական կայքերի հետևորդները իրենց համար կբացահայտեն երիտասարդ հայ տաղանդների, կցուցադրվեն Մինաս Ավետիսյանի արվեստի ոգով ստեղծված 45 կտավներ, լենդարթի կամ պոստմոդերնիզմի արտահայտչամիջոցներով ստեղծված աշխատանքները: Ներկաները ևս մեկ անգամ

կվերլուծեն Մինաս Ավետիսյանի արվեստը՝ այդքան հմուտ կերպով պատկերող Շիրակն ու իր մարդկանց ոգին

-Համատեղ նկարված կտավը: Ծրագրի ընթացքում բոլոր մասնակիցների կողմից ստեղծված կտավը կարտահայտի «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 8-րդ պլեների ստեղծագործական մթնոլորտը և մասնակիցների գաղափարներն ու ճաշակը: Այն կհամալրի «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային պլեների հավաքածուն

8. Միջոցառման շարունակականությունը, հեռանկարայնությունը և ազդեցության երկարատևությունը:

Մասնակից արվեստագետները ձեռք կբերեն նոր գիտելիքներ և հմտություններ վարպետության դասերի ընթացքում, կկիսվեն իրենց գիտելիքներով ու փորձով, համատեղ աշխատելով կստեղծեն նոր կտավներ: Լինելով բազմազան մշակութային միջավայրերից, ունենալով տարաբնույթ հմտություններ, ստեղծագործական պատկերացումներ՝ մասնակիցները խմբերով կստեղծեն տարբեր միջմշակութային հարթակներ և ցանցեր, կշարունակեն իրենց համատեղ գործունեությունը պլեների ավարտից հետո:
Համակարգող կազմակերպությունը կխթանի և կխրախուսի մասնակիցներին կազմակերպել վարպետության դասեր իրենց համայնքներում և կիսվել նոր գիտելիքներով, հմտություններով, գաղափարներով ու տպավորություններով, դարձնելով «Մինասի Գույներով» պլեների արդյունքները հասանելի ՀՀ տարբեր մարզերի, ԼՂՀ-ի, Ջացախքի և սփյուռքի հանրությանը:

9. Դիմողի կողմից վերջին երեք տարիների ընթացքում իրականացված ծրագրերի համառոտ նկարագրությունը (առավելագույնը 300 բառ)

«Ինքնություն և աշխարհայացք» ԵՀԿ-ն, լինելով երիտասարդ կազմակերպություն, ծավալել է բավականին հարուստ գործունեություն, համագործակցելով տարբեր կազմակերպությունների հետ:
Հաշվարկելով լեզուն միջմշակութային երկխոսության խթանման համար կարևոր տարր՝ 2015 թ-ին կազմակերպությունը անցկացրել է հայոց լեզվի, անգլերենի և իտալերենի դասեր Հայաստանում և Իտալիայում: Վերոհիշյալ լեզուների ուսումնասիրությունը անցկացվել է տվյալ լեզուները կրող ազգերի մշակութային առանձնահատկություններին և հաղորդակցման հմտություններին ծանոթանցնելով:
2015 թ-ի սեպտեմբերին «Ինքնություն և աշխարհայացք» ԵՀԿ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել և անցկացվել է «Գյումրեցիների ֆիլմերը» խորագրով միջոցառումը, որի նպատակն էր խթանել երկխոսություն և կապ Գյումրեցի երիտասարդ ռեժիսորների և տեղի հասարակության միջև, ստեղծել հարթակ քննարկելու ֆիլմերում վերհանված խնդիրները:
2016թ-ին ՝Identities՞ իտալական կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում «Ինքնություն և աշխարհայացք» ԵՀԿ-ն վարել է դասընթացներ կարծրատիպեր և ինքնություն թեմայով Իտալիայի Պեսկարա քաղաքում:
2016թ-ին «Փոքրիկ Իշխան» կրթահամալիրի հետ համագործակցության շրջանակներում «Ինքնություն և աշխարհայացք» ԵՀԿ-ն կազմակերպել և վարել է դասընթացներ և ինտերակտիվ վորքշոփեր մշակութային բազմազանություն, կարծրատիպեր և ինքնություն թեմաներով:
2017թ-ին Եվրոպական Երիտասարադական Հիմնադրամի հետ համագործակցությամբ և ֆինանսավորմամբ «Ինքնություն և աշխարհայացք» ԵՀԿ-ն իրականացրել է «Միգրացիա. Իրական պատկեր» ծրագիրը, որի նպատակն էր օգնել հայաստանաբնակ հայ

երիտասարդներին և սիրիահայ երիտասարդներին հաղթահարել միմյանց մասին ունեցած կարծրատիպերը և խթանել մշակութային երկխոսությունը իրենց միջև:
2017թ-ին «Ինքնություն և աշխարհայացք» ԵՀԿ-ն կազմակերպել և համակարգել է «Սիրիահայերի պատմությունները» խորագրով ցուցահանդեսը Հայաստանի տարբեր քաղաքներում:
2018թ-ին «Ինքնություն և աշխարհայացք» ԵՀԿ-ն իրականացրել է «Մեդիացիա երկխոսության համար» ծրագիրը Եվրոպական Երիտասարադական Հիմնադրամի հետ համագործակցությամբ և ֆինանսավորմամբ: Ծրագրի նպատակն էր խթանել երկխոսություն տեղի հայ երիտասարդների և սիրիահայ երիտասարդների միջև, տալով նրանց գիտելիքներ և հմտություններ կոնֆլիկտների կառավարման, մեդիացիայի և երկխոսության մասին:
2019թ-ին Ինքնություն և աշխարհայացք ԵՀԿ-ն կազմակերպել և վարել է դասընթացներ կոնֆլիկտների հաղթահարում, մեդիացիա և միջմշակութային երկխոսություն թեմաներով «Փոքրիկ իշխան» կրթահամալիրի և «Նոր լույս» մենթորական կազմակերպության պատանիների և երիտասարդների համար:

http://idandview.com/

https://www.facebook.com/profile.php?id=100014332025456

https://www.youtube.com/watch?v=vcIZRpsdLAM&feature=youtu.be&fbclid=IwAR1-KfAQ3h0hiI_cAVEF_9bgcUGxV-c2L-X-yMEL-_Q7d5uZV6PDZu89pMU

10. ՀՀ պետական և այլ կառույցներից նախկինում ստացած դրամաշնորհային աջակցություն/ներ. Նշել ծրագրի անվանումը, տարեթիվը, ֆինանսավորման չափը:

Ոչ

11. Միջոցառման անցկացման համար առաջարկվող նկարագրությունը և ժամանակացույցը (ըստ ներկայացված աղյուսակի, անհրաժեշտության դեպքում ավելացնել տողեր)
Նախատեսվող աշխատանքներ Սկիզբ Ավարտ

N	Նախատեսվող աշխատանքներ	Սկիզբ	Ավարտ
1.	1.Միջոցառման նախապատրաստական աշխատանքների փուլ /օգոստոսի 15-27/ ա/ մասնակիցների հավաքագրում ՀՀ տարբեր մարզերից, ԼՂՀ-ից, Ջավախքից և սփյուռքից բ/«Աղաջանյան» ճամբարի հետ պայմնավորվածության ձեռքբերում, պայմանագրի կնքում գ/ Վարպետության դասեր անցկացնելու նպատակով համապատասխան մասնագետների և արվեստագետների հրավերի կազմակերպում դ/ Ցուցահանդեսի կազմակերպան համար անհրաժեշտ	15.08.2019	27.08.2019

	պարագաների ձեռքբերում, հրավերների կազմակերպում		
2.	2.Միջոցառման համակարգում / օգոստոսի 28-31/ ա/ Մասնակիցների դիմավորում, տեղափոխում և տեղավորում ճամբարում բ/Վարպետության դասեր վարող մասնագետների տեղափոխում դեպի ճամբար և հետադարձ: գ/Ցուցահանդեսի կազմակերպում դ/ Միջոցառումը առցանց բազմազան հարթակներում հանրությանը հասանելի դարձնել /online PR/ ե/ պատվոգրերի հանձնման արարողության կազմակերպում զ/ Մասնակիցների մեկնում ճամբարից և Մինաս Ավետիսյանի թանգարանի այցելություն	28.08.2019	31.08.2019
3.	3. Հաշվետվության փուլ	01.09.2019	01.10.2019

N	Բյուջեի հոդվածը	Միավոր	Միավորի քանակը	Մեկ միավորի արժեքը ՀՀԴ	ՀՀ Շիրակի մարզպետարանից ակնկալվող գումարը ՀՀԴ	Հայցող կազմակերպության ներդրումը ՀՀԴ	Այլ աղբյուրներից ներդրումը ՀՀԴ	Ընդամենը ՀՀԴ
1	**Մարդկային ռեսուրսներ (ներառյալ աշխատավարձ և հոնորար)**							
ա	Ծրագրի ղեկավար (ներառյալ հաղորդավարի ծառայություններ)	անձ	1	85000	85000			85000
բ	Ծրագրի համակարգող	անձ	1	40000	40000			40000
գ	Հաշվապահ	անձ	1	25000	25000			25000
	Ընդամենը				150000			150000
2	**Նյութածախս**							
ա	Մեծ կտավ (1.2*1.2)	հատ	1	15000	15000			15000
բ	Ցուղաներկ /5գույն/	հատ	1	5000	5000			5000
	Ընդամենը				20000			20000
3	**Տրանսպորտային ծախսեր**							
	Տրանսպորտային ծախսեր (Մասնակիցներին ճամբար տեղափոխելու և էքսկուրսիաների կազմակերպման համար, ինչպես նաև միջոցառման անցկացման համար անհրաժեշտ պարագաների (մոլբերտներ՝ 45 հատ և այլն) տեղափոխման համար)	անգամ	1	100000	100000			100000
	Ընդամենը				100000			100000
4	**Կեցության և սենդի ձեռք բերման ծախսեր**							
	Կեցության հետ կապված ծախսերի վճարում	45 անձ*3 օր	135	6000	810000			810000
	Սենդի հետ կապված ծախսերի վճարում	45 անձ*3 օր	135	3000	405000			405000
	Ընդամենը				1215000			1215000
5	**Տպագրական ծախսեր**							
	Պատվոգրերի տպագրում	հատ	45	500	22500			22500
	բաջերի տպագրում	հատ	45	500	22500			22500
	Ընդամենը				45000			45000
7	**Այլ (Տեխնիկայի վարձակալություն)**							
	Լուսանկարչական սարքի վարձակալություն	օր	4	10000	40000			40000
	Պրոեկտոր	օր	3	10000	30000			30000
	Ընդամենը				70000			70000
	Ընդամենը							1600000

Ծրագրի ղեկավար
Հաշվապահ
Ամսաթիվ 09.03.2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» օգոստոսի 2019 թվականի N: 384-Ա ք.Գյումրի

ՄՐՑՈՒԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի» 34-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին միջոցառումների կազմակերպման համար սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման նպատակով կայացած մրցույթի արդյունքում հաղթող ճանաչել «Ինքնություն և աշխարհահայացք» երիտասարդական հասարակական կազմակերպությանը:
2. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին իրականացվելիք «Մինասի գույներով» երտասարդ նկարիչների միջազգային 8-րդ պլեներ» մշակութային միջոցառման կազմակերպումը վերապահել «Ինքնություն և աշխարհահայացք» երիտասարդական հասարակական կազմակերպությանը:

Ս.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2

ք. Գյումրի «19» օգոստոսի 2019 թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը, ի դեմս մարզպետին փոխարինող Վ. Գրիգորյանի (այսուհետ՝ Պատվիրատու), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ինքնություն և աշխարհայացք» երիտասարդական հասարակական կազմակերպությունը, (այսուհետ՝ Կատարող) ի դեմս նախագահ՝ Մ. Հովհաննիսյանի, որը գործում է Կատարողի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

Պայմանագրի առարկան

1. Պայմանագրով սահմանվում է «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 08 բաժնի 02 խմբի 05 դասի 1196 մարզերի մշակութային զարգացման 11001 «Մշակութային միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում» պետական ծրագրով ընթացիկ դրամաշնորհների տրամադրման կարգը, որի շրջանակներում Կատարողը մատուցում է հետևյալ ծառայությունները՝ **2019 թվականի օգոստոսի 28-31-ը ՀՀ Շիրակի մարզում կազմակերպել և անցկացնել «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 8-րդ պլեներ** մշակութային միջոցառումը (այսուհետ՝ Պատվեր)՝ Պայմանագրով սահմանված կարգով, իսկ Պատվիրատուն պարտավորվում է բյուջեից հատկացված գումարի շրջանակներում Կատարողին տրամադրել **1 920 000 (մեկ միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ,** ներառյալ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ-ն):

2. Ծառայության ընդհանուր նկարագրությունը և արժեքը ներկայացված են Պայմանագրի **«Հավելված 1»-ում և «Հավելված 2»-ում:**

Կողմերի իրավունքները և պարտականությունները

3. Պատվիրատուն իրավունք ունի.

1) Ցանկացած ժամանակ ստուգելու Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

2) Պահանջել Կատարողից Պայմանագրով սահմանված ժամկետում ներկայացնել հաշվետվություն:

4. Պատվիրատուն պարտավոր է.

1) Պայմանագրի շրջանակներում աջակցել Կատարողին:

5. Կատարողն իրավունք ունի.

1) Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը:

6. Կատարողը պարտավոր է.

1) Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով:

2) Ծառայությունը մատուցել Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

3) Կատարել Պատվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները:

4) Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծառայության իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պատվիրատուի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարման կարգը և ժամկետները

7. 2019 թվականի ՀՀ պետական բյուջեով հատկացվող պետական աջակցության չափը կազմում է **1 920 000 (մեկ միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ,** ներառյալ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ-ն):

8. Կատարողը Պատվերի ավարտից հետո՝ մինչև **2019 թվականի սեպտեմբերի 23-ը** պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել հաշվետվություն՝ իր կողմից իրականացված ծախսերի վերաբերյալ:

9. Պատվիրատուն հանձնման–ընդունման ակտը ստանալու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը կամ ծառայությունները չընդունելու պատճառաբանված մերժումը: Ծառայության արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահից:

10. Պատվիրատուն Պայմանագրի 7-րդ կետում նշված գումարը վճարում է Պատվերի իրականացումից հետո՝ մինչև պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը:

11. Պատվերի գնում ներառված ավելացված արժեքի հարկը Կատարողին վճարվում է հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

Կողմերի պատասխանատվությունը

12. Պայմանագրով հատկացված գումարի շրջանակներում Կատարողի կողմից աշխատանքների և ծառայությունների գնումները պետք է իրականացվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

13. Պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Պայմանագրի գործողության ժամկետը

14. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև **2019 թվականի սեպտեմբերի 30-ը:**

Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

15. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

Եզրափակիչ դրույթներ

16. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

17. Պայմանագիրը և հավելվածները կնքված են հայերեն լեզվով, Պայմանագիրը կազմված է 2 էջից և ունի 2 հավելված՝ Հավելված 1՝ 2 էջ, Հավելված 2՝ 1 էջ, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	«Ինքնություն և աշխարհայացք» Երիտասարդական հասարակական կազմակերպություն
Ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	Ք. Գյումրի, Անի թաղամաս, 7 փ., շ. 8, բն. 15,
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900211287033	ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ Հ/Հ 2050122058651001
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 05542743
ՀՀ Շիրակի մարզպետին փոխարինող՝	Նախագահ՝
Վ.Գրիգորյան	Մ. Հովհաննիսյան

Կ.Տ.

Կ.Տ.

«Հավելված 1»

«19» օգոստոսի 2019 թ. N ՄՄԲ 2 պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
/ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ/
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
«ՄԻՆԱՍԻ ԳՈՒՅՆԵՐՈՎ» ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 8-ՐԴ ՊԼԵՆԵՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

Անցկացման ժամկետը՝ 2019 թ. օգոստոսի 28-31-ը

Անցկացման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, Թորոսգյուղի «Աղաջանյան» ճամբար

2019 թվականի օգոստոսի 28-31-ը ՀՀ Շիրակի մարզում կանցկացվի «Մինասի գույներով» երիտասարդ նկարիչների միջազգային 8-րդ պլեները»: Պլեները կհամախմբի 18-30 տարեկան 45 երիտասարդ արվեստագետների՝ ՀՀ ողջ տարածքից, ԼՂՀ-ից, Վրաստանի Հանրապետության Ջավախք շրջանից և Սփյուռքից:

Ծրագրի նպատակն է ՀՀ տարբեր մարզերի, Արցախի և օտարերկրյա երիտասարդ արվեստագետների միջև ստեղծել միջմշակութային համագործակցության հարթակ, այն ծառայեցնելով որպես մշակութային երկխոսության երաշխիք: Պլեների մասնակիցները ճամբարային պայմաններում կունենան հարուստ և հագեցած մշակութային օրեր, ապրելով կողք-կողքի, երիտասարդ նկարիչները բարեկամական և ընկերական մթնոլորտում կունենան հարուստ փորձի փոխանակում, կմասնակցեն գիտաճանաչողական էքսկուրսիաների, կայցելեն մարզի թանգարաններ, կմասնակցեն անցկացվող վարպետության դասերին, կունկնդրեն արվեստաբանների դասախոսություններ, կնկարեն Շիրակի մարզի բնությունը, պատմության ու մշակույթի հուշարձանները իրենց գույներով: Մասնակիցների միջմշակութային երկխոսությունը և մերձեցումն ապահովելու նպատակով կանցկացվի միջմշակութային երեկո: Յուրաքանչյուր երկրից, երկրամասից, մարզից և շրջանից եկած մասնակցի հնարավորություն կընձեռվի ներկայացնելու իրենց բնակավայրին բնորոշ կոլորիտային սննդամթերք, ըմպելիքներ, դրոշներ, լուսանկարներ, գրքեր, տարազներ, այլ պարագաներ /մեկական սեղանի վրա/: Միջմշակութային երեկոյի ժամանակ մասնակիցները կներկայացնեն նաև իրենց կազմակերպությունները, ազգային երգ ու պար և այլն, հանդես կգան իրենց բնակավայրին բնորոշ առանձնահատկություններով:

Պլեների ավարտին մասնակիցների լավագույն նկարներով կբացվի ցուցահանդես, կկազմակերպվի շքերթ՝ բոլոր պատվիրակությունների մասնակցությամբ, կինչի միջոցառման հիմնը, կլինեն գեղարվեստական համույթների և «Մինասի գույներով» խորագիրը կրող «Երիտասարդ նկարիչների միջազգային 8-րդ պլեների» մասնակիցների ելույթներ: Պլեների մասնակիցներին կշնորհվեն պատվոգրեր:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	«Ինքնություն և աշխարհայացք» Երիտասարդական հասարակական կազմակերպություն
Ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	Ք. Գյումրի, Անի թաղամաս, 7 փ., շ. 8, բն. 15,
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900211287033	ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ Հ/Հ 2050122058651001
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 05542743
ՀՀ Շիրակի մարզպետին փոխարինող՝	Նախագահ՝
Վ. Գրիգորյան	Մ. Հովհաննիսյան

Կ.Տ.

Կ.Տ.

«Հավելված 2»

«19» օգոստոսի 2019 թ. N ՄՍԲ 2 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ «ՄԻՆԱՍԻ ԳՈՒՅՆԵՐՈՎ» ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ 8-ՐԴ ՊԼԵՆԵՐ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

	Ծախսի անվանումը	Քանակը	Չափման միավորը	Միավոր արժեքը /ՀՀ դրամ/	Ընդամենը արժեքը /ՀՀդրամ/
1.	Կեցության հետ կապված ծախսերի վճարում	45 հոգի	3 օր	6000	810 500
2.	Սննդի հետ կապված ծախսերի վճարում	45 հոգի	3 օր	3000	405 000
3.	Միջոցառման տպագրական ծախսեր և նկարչական պարագաների ձեռք բերում՝				
	• Պատվոգրեր	45	հատ	500	22 500
	• Բաջեր	45	հատ	500	22 500
	• Մեծ կտավ (1.2X1.2)	1	հատ	15 000	15 000
	• Յուղաներկեր (5 գույն)	5	հատ	1000	5 000
4.	Տրանսպորտային ծախսեր մասնակիցներին և կազմակերպիչներին ճամբար տեղափոխելու և էքսկուրսիաների կազմակերպման համար, ինչպես նաև միջոցառման անցկացման համար անհրաժեշտ պարագաների /մոլբերտներ ՝45 հատ և այլ/ տեղափոխման համար բեռնատար մեքենա	1	անգամ	100 000	100 000
5.	Լուսանկարչական սարքի վարձակալություն	4	օր	10 000	40 000
6.	Պրոեկտորի վարձակալություն	3	օր	10 000	30 000
7.	Ծրագրի համակարգողի ծառայությունների մատուցում	1	անձ	40 000	40 000
8.	Ծրագրի ղեկավարի (ներառյալ հաղորդավարի ծառայություններ) ծառայությունների մատուցում	1	անձ	85 000	85 000
9.	Հաշվապահի ծառայությունների մատուցում	1	անձ	25 000	25 000
	Ընդամենը՝				**1 600 000**

Ընդհանուր ծախսը կազմում է 1 600 000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, առանց ավելացված արժեքի հարկի:

Ավելացված արժեքի հարկը կազմում է 320 000 (երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Պետական Պատվերի գինը կազմում է 1 920 000 (մեկ միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Շիրակի մարզպետարան	«Ինքնություն և աշխարհայացք» երիտասարդական հասարակական կազմակերպություն
Ք.Գյումրի, Գ. Նժդեհի 16	Ք. Գյումրի, Անի թաղամաս, 7 փ., 2/ 8, բն. 15,
ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական ծախսերի գլխավոր կառավարչություն ՀՎՀՀ 90021287033	ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ Հ/Հ 2050122058651001
ՀՎՀՀ 05507437	ՀՎՀՀ 05542743
ՀՀ Շիրակի մարզպետին փոխարինող՝	Նախագահ՝
Վ.Գրիգորյան	Մ. Հովհաննիսյան
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N 1431

09 08 2019 թ.

Հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի
09.02.2018 թվականի թիվ 50-Ա հրամանով
Ձև 7

ՏԵՂԵԿԱՆՔ

Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ

Տրվում է առ այն, որ «08» օգոստոս 2019 թվականի դրությամբ **«Ինքնություն և աշխարհայացք» ՀԿ-ի (ՀՎՀՀ 05542743)**

(կազմակերպության լրիվ անվանումը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, ՀՎՀՀ)

հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորությունները, դեբետային գումարները, սահմանված չափից ավել վճարված գումարները և միասնական հաշվում առկա գումարները, տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա, կազմում են՝

դրամ

Հարկի կամ վճարի անվանումը	Հարկի կամ վճարի չափը	Տույժը	Տուգանքը	Պարտավորության չափը (ընդամենը)
1	2	3	4	5
Ավելացված արժեքի հարկ	-	-	-	-
Ներմուծման մասով ավելացված արժեքի հարկ	-	-	-	-
Շահութահարկ	-	-	-	-
Եկամտային հարկ	-	-	-	-
Ակցիզային հարկ	-	-	-	-
Ներմուծման մասով ակցիզային հարկ	-	-	-	-
Շրջանառության հարկ	-	-	-	-
Արտոնագրային հարկ	-	-	-	-
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	-	-	-	-
Ներմուծման մասով բնապահպանական հարկ	-	-	-	-
Ոչ ռեզիդենտի շահութահարկ	-	-	-	-
Սոցիալական վճար (ամսական)	-	-	-	-
Սոցիալական վճար (տարեկան)	-	-	-	-
Պետական տուրք	-	-	-	-
Ռոյալթի	-	-	-	-
Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար	-	-	-	-
Ճանապարհային հարկ	-	-	-	-
Հաստատագրված վճար	-	-	-	-
Պարզեցված հարկ	-	-	-	-
Եկամտահարկ	-	-	-	-
Պարտադիր սոցիալական ապահովության վճար	-	-	-	-
Տուգանքներ և վնասի հատուցման գումար	-	-	-	-
Դրոշմանիշային վճար	-	-	-	-
Ընդամենը	0	0	0	0

Դեբետային մնացորդ		Սահմանված չափից ավել վճարած գումարներ				Միասնական հաշվում առկա գումար
Ավելացված արժեքի հարկ	Ակցիզային հարկ	Մինչև 01.01.2018թ.	01.01.2018թ.-ից հետո սոցիալական վճարի գծով (հաշվարկի ճշգրտման արդյունքում առաջացած)	Դրոշմանիշային վճարի գծով	Պետական տուրքի գծով	
6	7	8	9	10	11	12
0	0	29413	0	0	0	0

Տեղեկանքը տրվում է ներկայացնելու **«Շիրակի մարզպետարան»**

ՀՀ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 11 բաժնի պետ

(ստորագրությունը) **Անահիտ Առաքելյան** (անունը, ազգանունը)

Տեղեկանքը կազմող աշխատակից՝

(ստորագրությունը) **Շուշանիկ Սուքիասան** (անունը, ազգանունը)

«09» օգոստոս 2019թ.

Սույն տեղեկանքը տրվում է տեղեկանքի տրամադրման օրվա դրությամբ հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա, որը կարող է փոփոխվել հսկողական միջոցառումների արդյունքում կամ հարկ վճարողի գործունեության վերաբերյալ նոր տվյալներ առաջ գալու պարագայում: